Կարգապահական գործ թիվ ԿԳ-15026

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 275-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/162-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Կարեն Մեժլումյանի, Տիգրան Խուրշուդյանի, Երվանդ Վարոսյանի, Լուսինե Սահակյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Մարտուն Փանոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Աննա Դավթյանին (արտոնագիր թիվ 233) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Մայլեստ Ցոլակի Կարապետյանն իր 10.03.2015թ. (մուտքագրված՝ 01.04.2015թ.) դիմումով հայտնել է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ընթանում է իր տղայի՝ Հովհաննես Կարապետյանի դատավարությունն ընդդեմ հարևան Սոֆյա և Հովհաննես Մելքոնյանների՝ համայնքապատկան հող զբաղեցնելու, ինչպես նաև իր տղայի բակում առանց համապատասխան մարմինների թույլտվության նրանց դարբաս և պատուհան բացելու վերաբերյալ: Ըստ Դիմողի, ինքը մասնակցում է դատավարություններին առանց կարգավիճակի, իսկ իր տղան չի մասնակցում, վերջինիս շահերը ներկայացնում է փաստաբան Իշխան Վանոյանը: Դիմողը հայտնել է, որ հակառակորդ կողմի փաստաբան Աննա Դավթյանը, որի հետ ինչպես ինքը, այնպես էլ իր որդին ոչ մի առնչություն չեն ունեցել և չեն ճանաչում, 2015թ. մարտի 4-ի նիստի ընթացքում ոչ մասնագիտորեն անպարկեշտ արտահայտություններով սկսել է վարկաբեկել Դիմողին և նրա ընտանիքի անդամներին: Դիմողի խոսքով, փաստաբանը շարունակել է իր «ելույթը» մինչև դատավորը և Դիմողի փաստաբանը զգուշացրել են, որ արտահայտությունները ձայնագրվում են:

Դիմողը խնդրել է փաստաբան Աննա Դավթյանի նկատմամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 28.04.2015թ. թիվ 91-Ա/ԿԳ-15026 որոշմամբ փաստաբան Աննա Դավթյանի (արտոնագիր թիվ 233) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝

«Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով: Կարգապահական վարույթը հարուցվել է դատական նիստի ընթացքում հետևյալ արտահայտությունները արված և դրանք դատավարության մասնակցին ուղղված լինելու վերաբերյալ տեղեկությունը ստուգելու նպատակով. «անբարոյականության մակարդակը ոչ մի տեղ չի նշված էլի, թե մինչև որտեղ է սահմանը», իսկ հակառակորդ կողմի ներկայացուցչի այն արտահայտությանը «էդ արդեն վիրավորանք եք անում չգիտեմ ում հասցեին է ուղղված բայց...», փաստաբանը պատասխանում է «էն անձի, ով որ եկել է հարյուր տարվա տան դեմը տուն է կառուցել ու հիմա էլ փակել է տալիս էդ տան պատուհանները» (դատական նիստի ձայնագրություն Channel 05 2015_03_04 14-27-24, սկսած 08:48 րոպեից):

29.04.2015թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռոբերտ Մանվելյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողից բացատրություն չի վերցվել:

Խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է և պնդել է գրավոր բացատրությունում նշված հանգամանքները:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել, ներկայացրել է վերը նշված դատվարության 04.03.2015թ. նիստի ձայնագրությունը:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողից բացատրություն չի վերցվել:

Խորհրդի նիստում Պատասխանողը հայտնել է, որ թույլ է տվել նման արտահայտություն, այն ուղղված է եղել դատավարության մասնակից պատասխանող, հակընդդեմ հայցով հայցվոր Հովհաննես Կարապետյանին, և «անբարոյականություն» ասելով ինքն ի նկատի է ունեցել վատ վերաբերմունքը, վատ անելը: Պատասխանողը հայտնել է նաև, որ հնարավոր էր և կարող էր ինքն իր դիրքորոշումը հայտնել այլ բառերով:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

29.06.2015թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն Դիմողից և Պատասխանողից բացատրություններ չեն վերցվել, իսկ ապացուցման ենթակա փաստեր են համարվում.

- Դիմողն ըստ էության մեղադրում է փաստաբանին այն արարքի համար, որ վերջինս դատական նիստին հնչեցրած արտահայտություններով վարկաբեկել է Դիմողին և նրա ընտանիքի անդամներին: Տվյալ պարագայում նշված փաստի հաստատման բեռն ընկած է Դիմող կողմի վրա:
- datalex.am պորտալից տպած թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործի

ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ փաստաբան Աննա Դավթյանը հանդիսանում է տվյալ քաղաքացիական գործով հայցվոր Սոֆյա Ալեքսանի Մելքոնյանի ներկայացուցիչը:

- Թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործով դատական նիստի ձայնագրության ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ փաստաբանը հնչեցնում է հետևյալ արտահայտությունը «անբարոյականության մակարդակը ոչ մի տեղ չի նշված, էլի թե մինչև որտեղ է սահմանը», իսկ հակառակորդ կողմի ներկայացուցչի այն արտահայտությանը «էդ արդեն վիրավորանք եք անում չգիտեմ ում հասցեին է ուղղված բայց...», փաստաբանը պատասխանում է «էն անձի, ով որ եկել է հարյուր տարվա տան դեմը տուն է կառուցել ու հիմա էլ փակել է տալիս էդ տան պատուհանները»:

01.07.2015թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի սեպտեմբերի 07-ին, ժամը՝ 18.30-ին, հոկտեմբերի 08-ին, ժամը՝ 18:45-ին, նոյեմբերի 11-ի ժամը՝ 19:15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործով 2015թ. մարտի 4-ի դատական նիստի ընթացքում Պատասխանողի կողմից արվել է հետևյալ արտահայտությունները **«անբարոյականության մակարդակը ոչ մի տեղ չի նշված, էլի թե մինչև որտեղ է սահմանը»**, իսկ հակառակորդ կողմի ներկայացուցչի այն արտահայտությանը «էդ արդեն վիրավորանք եք անում չգիտեմ ում հասցեին է ուղղված բայց...», փաստաբանը պատասխանում է **«էն անձի, ով որ եկել է հարյուր տարվա տան դեմը տուն է կառուցել ու հիմա էլ փակել է տալիս էդ տան պատուհանները»**, որը հաստատվում է, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, դատական նիստի ձայնագրությամբ Channel 05 2015_03_04 14-27-24, սկսած 08:48 րոպեից,

2) վերոնշված արտահայտություններն ուղղված են եղել Դիմողի որդուն՝ Հովհաննես Կարապետյանին, որը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով,

3) Դիմողի որդին թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործով հանդիսանում է դատավարության մասնակից՝ սկզբնական հայցով պատասխանող, հակընդդեմ հայցով՝ հայցվոր, որը հաստատվում է datalex.am դատական տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքի տեղեկատվությամբ, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 04.09.2015թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/552-15 տեղեկանքի համաձայն Աննա Դավթյանն արտոնագիրը ստացել է 31.10.1991թ.: Աննա Դավթյանի նկատմամբ 2006-2015թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Աննա Դավթյանին «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1. կետի՝ «Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, *այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին*: ...» Այսինքն, փաստաբանի կողմից գործին մասնակցելիս դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին անհարգալից վերաբերվելը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը.

արդյո՞ք Պատասխանողը գործին մասնակցելիս դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին անհարգալից է վերաբերվել:

Պատասխանելով այս հարցին, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողն գործին մասնակցելիս դատավարության մասնակիցներին, մասնավորապես թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործով սկզբնական հայցով պատասխանող, հակընդդեմ հայցով հայցվոր Հովհաննես Կարապետյանին անհարգալից է վերաբերվել, ինչի մասին է վկայում Պատասխանողի կողմից թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործով 2015թ. մարտի 4-ի դատական նիստի ընթացքում արված հետևյալ արտահայտությունները՝ **«անբարոյականության մակարդակը ոչ մի տեղ չի նշված, էլի թե մինչև որտեղ է սահմանը»,** իսկ հակառակորդ կողմի ներկայացուցչի այն արտահայտությանը «էդ արդեն վիրավորանք եք անում չգիտեմ ում հասցեին է ուղղված բայց...», փաստաբանը պատասխանում է **«էն անձի, ով որ եկել է հարյուր տարվա տան դեմը տուն է կառուցել ու հիմա էլ փակել է տալիս էդ տան պատուհանները»:** Նշված արտահայտությունն ուղղված է եղել Դիմողի որդուն՝ թիվ ՇԴ/1551/02/14 քաղաքացիական գործով սկզբնական հայցով պատասխանող, հակընդդեմ հայցով հայցվոր Հովհաննես Կարապետյանին, ինչը հաստատվել է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

Թեև Պատասխանողը հայտնեց, որ նպատակ չի ունեցել վիրավորելու Դիմողին կամ նրա որդուն, և «անբարոյականություն» ասելով ինքն ի նկատի է ունեցել վատ վերաբերմունքը, վատ անելը, սակայն ինքն էլ ընդունեց, որ կարող էր այլ բառով արտահայտել այն ինչն ինքն է ի նկատի ունեցել: Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողն այնպես պետք է արտահայտեր իր դիրքորոշումը, որ այլ անձանց կողմից այն չընկալվեր որպես վիրավորանք:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայտնել դիրքորոշում, առարկելու այլ անձի հայտնած դիրքորոշմանը, սակայն դա չի նշանակում, որ դրա հետ միասին

կարելի է բացասական որակումներ կատարել անձի վերաբերյալ: Տվյալ դեպքում Պատասխանողն իր կողմից ներկայացված դիրքորոշումներում թույլ է տվել նման որակումներ: Խորհուրդն արձանագրում է, որ նման որակումներից պետք է զերծ մնա հատկապես փաստաբանը՝ հաշվի առնելով փաստաբանի մասնագիտության բովանդակությունը և հասարակական դերն ու կոչումը:

Այսպիսով, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը թույլ է տվել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1.կետի պահանջների խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Աննա Դավթյանին (արտոնագիր թիվ 233) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1. կետի պահանջների խախտման համար:***

2. ***Փաստաբան Աննա Դավթյանի (արտոնագիր թիվ 233) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դենթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Աննա Դավթյանին և Դիմող Մայլեստ Կարապետյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Ն.Հարությունյան